

օտար ♦♦♦ գիր

Էռնեստո Սաբատո թունելը



Երևան,
Անտարես

ՀՏԴ 860 (7/8) – 31 Սաբատո
ԳՄԴ 84.7 Արգ – 44
Ս 121

Իսպաներենից թարգմանեց
ՌՈՒԶԱՆՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ

Խմբագիր՝
ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Սաբատո Էռնեստո
Ս 121 Թունելը: Վեպ/Էռնեստո Սաբատո.- Եր.:
«Անտարես», 2014.- 236 էջ:

«Թունելը» վեպում Էռնեստո Սաբատոն իր հերոսի՝ նկարիչ Կաստելի գիտակցության միջոցով ապացուցում է, որ հույսը, որպես այդպիսին, գոյություն չունի, և որ մարդկային գիտակցությունը երբեք չի կարող հասնել անվերապահ կամ բացարձակ սիրո:

ISBN 978-9939-51-685-1

© Heirs of Ernesto Sabato
c/o Guillermo Schavezon & Asociados,
Agencia Literaria
www.schavezon.com



© Անտարես, 2014

«...այնուամենայնիվ, գոյություն ունեւր
միայն մեկ թունել՝ մուտ
և միայնակ. այն, որ իմն էր»:

Նվիրում եմ ընկերոջս՝ Ռոխելիո Ֆրիխերիոյին.
մարդ, որ կարողացել է դիմակայել
խառնիխումն մտքերի վայրիվերումներին

Գլուխ 1

Բավական է ասել, որ ես Խուան Պարլո Կաստելն եմ, այն նկարիչը, որ սպանել է Մարիա Իրիբարնեին: Ենթադրում եմ, որ բոլորդ հիշում եք դատավարության ընթացքը, և իմ անձի մասին մանրամասն բացատրությունների կարիք չկա: Չնայած նույնիսկ սատանային է անհայտ, թե մարդիկ հատկապես ինչն են հիշում և ինչու: Իրականում, ես միշտ էլ մտածել եմ, որ հավաքական հիշողություն՝ որպես այդպիսին, գոյություն չունի, չնայած այն կարող էր պաշտպանության ինչ-որ ձև լինել մարդու համար: Խոսքը, թե «Նախկինում ամեն ինչ ավելի լավ էր», չի նշանակում, թե նախկինում վատ բաներ քիչ են եղել, պարզապես մարդիկ դրանք մոռացության են տվել: Սակայն վերջինս ոչ

բոլորին է վերաբերում. ես, օրինակ, հակված եմ առավելապես հիշելու վատ բաները, և ուրեմն՝ կարելի է ասել, որ անցած ժամանակն ավելի վատն է եղել. հակառակ դեպքում՝ ներկան ինձ չէր թվա նույնքան սարսափելի, որքան անցյալը. իմ հուշերում այնքան վատ, դժբախտ և ցինիկ իրողություններ կան, որոնցից հիշողությունս վերածվել է անամոթության կեղտոտ թանգարանը լուսավորող աղոտ լույսի: Շատ հաճախ, ձեռքս առնելով ոստիկանական քրոնիկներից որևէ մեկը, լիովին կոտրված, մնում էի արվեստանոցի մութ անկյուններից մեկում ու կարդում: Բայց, անկեղծ ասած, միշտ չէ, որ մարդկային արարածներից միայն ամենաանամոթներն են հայտնվում բանտում, նույնիսկ կարելի է ասել, որ իրականում հանցագործներն ավելի ազնիվ են, ավելի անվնաս. սա ես եմ ասում, քանի որ ինքս էլ եմ մարդ սպանել. խոր և ազնիվ համոզմունք: Հանցավոր է մարդը. վերացնել նրան և վերջ: Սա հենց այն է, ինչը ես անվանում եմ «բարի արարք»: Միայն մտածեք, թե որքան աղետալի կլինի հասարակության համար, եթե այդ մարդը շարունակի իր թույնը տարածել,

իսկ մենք, այդ թույնը վերացնելու փոխարեն, դիմում ենք այլ միջոցների. անանուն նամակներ, բամբասանք, և նմանատիպ այլ ստորություններ: Ինչ վերաբերում է ինձ, ապա պետք է խոստովանեմ, որ հիմա ափսոսում եմ ազատությանս լավագույն ժամանակից չօգտվելու համար, որ չեմ վերացրել մոտավորապես վեց կամ յոթ ծանոթներիս:

Այն, որ աշխարհը սարսափելի է, հավերժական ճշմարտություն է և ապացույցի կարիք չունի, բավական է հիշատակել այն դեպքը, երբ համակենտրոնացման ճամբարներից մեկում նախկին դաշնակահարը սկսում է գանգառվել քաղցից, նրան ստիպում են առնետ ուտել, այն էլ՝ կենդանի:

Այնուամենայնիվ, այս մասին չէ, որ ուզում եմ խոսել հիմա, հետագայում, եթե առիթ լինի, ևս մի քանի բան կպատմեմ այդ առնետի հետ կապված:

Գլուխ 2

Ինչպես արդեն ասել եմ՝ իմ անունը Խուան Պաբլո Կաստել է: Դուք, հավանաբար, կհարցնեք, թե ինչ հանգամանքներ են ինձ ստիպել գրի առնել իմ կատարած հանցանքի պատմությունը (չգիտեմ, արդյոք արդեն ասել եմ, որ պատմելու եմ հանցանքիս մասին) և հատկապես՝ հրապարակել այն: Մարդկային հոգին ինձ բավական ծանոթ է, և ես կարող եմ ասել, որ նրանք կասեն, թե դա արել եմ՝ ելնելով սնապարծությունից: Թող մտածեն ինչ կուզեն, թքած ունեմ, ես արդեն վաղուց թքած ունեմ ուրիշների կարծիքների և գնահատականների վրա. հետևաբար, կարող եք մտածել, որ հենց այդպես է, որ կա: Ի վերջո, ես էլ մյուսների պես միս ու ոսկորից եմ, նույն մազերով ու եղունգներով,

և չափազանց անարդար կլիներ, որ դուք հենց ինձնից հատուկ արժանիքներ պահանջեիք. մարդն իրեն գերմարդ է կարծում, մինչև որ մի օր բացահայտում է սեփական մանրությունը, ստորությունն ու նենգությունը: Ոչինչ չեմ ասի սնապարծության մասին, կարծեմ՝ չկա ոչ ոք, որ զրկված լինի մարդկային առաջընթացի այդ կարևորագույն շարժիչ ուժից: Ինձ համար ծիծաղելի են այն պարոնները, որ քայլում են էյնշտեյնի և Նրա նմանների համեստությամբ, պատասխանը հետևյալն է. հեշտ է լինել կամ թվալ համեստ, երբ հայտնի մարդ ես, թվում է՝ դրանում սնապարծության նշույլ անգամ չկա, մինչև որ այն չի երևում իր ամենանուրբ ձևով՝ համեստությամբ: Քանիցս ենք բախվել և բախվում նմանատիպ մարդկանց հետ, մինչևիսկ Քրիստոսի նման իրական և խորհրդանշական էակն է արտասանել սնապարծությունից կամ առնվազն գոռոզությունից ծնված խոսքեր: Լեոն Բլուման¹, մեծամտության մեղադրանքից պաշտպանվելու համար արդարանում էր՝ ասելով, որ իր ամբողջ կյանքը վատնել է այնպիսի

1 Ֆրանսիացի վիպասան, էսսեիստ, պոետ:

մարդկանց ծառայելով, որոնք նույնիսկ իր եղունգը չարժեին: Մնապարծություն կարելի է տեսնել ամենաանսպասելի տեղերում՝ բարության, նվիրվածության և մեծահոգության կողքին: Մանուկ ժամանակ ինձ վիատեցնում էր այն միտքը, որ մի օր մայրս պիտի մահանա (տարիների հետ սկսում ես հասկանալ, որ ոչ միայն համակերպվում ես մահվան հետ, այլև որ այն քեզ առավել տոկուն է դարձնում), չէի պատկերացնում, որ բոլորի պես մայրս էլ կարող էր թերություններ ունենալ: Հիմա, երբ արդեն նա չկա, հասկանում եմ, որ այնքան լավն էր, որ չէր կարող պարզապես սովորական մարդ լինել, բայց հիշում եմ նաև, որ կյանքի վերջում, երբ ես արդեն մեծ էի, ինձ ցավ էր պատճառում մորս լավագույն արարքներում մնապարծության կամ գոռոզության նշույլ իսկ բացահայտելը: Նման, բայց առավել ակնառու բան տեղի ունեցավ ինձ հետ մորս քաղցկեղի վիրահատությունից հետո: Ժամանակին տեղ հասնելու համար ստիպված էի երկու անքուն գիշեր անցկացնել. երբ ժամանեցի տուն ու մոտեցա նրա մահճակալին, հիվանդ մայրս մի կերպ ժպտաց և անկենդան

դեմքը լուսավորվեց քնքշությամբ, կարեկցանքի մի քանի բառ շնչաց ինձ (խղճաց՝ հոգնածություննս տեսնելով). հանկարծ հոգիս սողոսկեց սնապարծության, գոռոզության պես թաքուն մի զգացում. չէ՞ որ հասցրել էի այդքան շուտ հասնել:

Այժմ ես խոստովանում եմ ամեն ինչ, որպեսզի տեսնեք, որ ինձ ամենևին էլ մյուսներից բարձր չեմ դասում:

Այնուամենայնիվ, սնապարծությունից չէ, որ պատմում եմ իմ պատմությունը. չնայած՝ պատրաստ եմ խոստովանել, որ այստեղ մեծատտության կամ գոռոզամտության ինչ-որ նշույլ, այնուամենայնիվ, կա: Երբ սկսեցի գրել, հաստատապես որոշել էի ոչ մի տեսակի բացատրություններ չտալ. պատմել բացառապես հանցանքի մասին և վերջ, եթե ինչ-որ մեկին դուր չգա, կարող է այն մի կողմ նետել, չնայած չեմ կարծում, քանի որ հայտնի բան է, որ հենց ամենահետաքրքրասեր մարդիկ են բացատրությունների ետևից ընկնում, իսկ նրանք, հաստատ, բաց չեն թողնի հանցագործի պատմությունը մինչև վերջ կարդալու հնարավորությունը:

Ես կարող էի զերծ մնալ խոստովանական այս էջերը գրելու պատճառները լուսաբանելուց, բայց քանի որ էքսցենտրիկ չեմ, ապա կասեմ ճշմարտությունը, որը շատ պարզ է. կարծել եմ, որ շատերը կկարդան այս գիրքը, քանի որ հիմա ես հայտնի եմ, և չնայած մարդկանց և ընդհանրապես ընթերցողների հանդեպ ունեցած պատրանքների բացակայությանը՝ ինձ ոգևորում է այն աղոտ հույսը, որ ինչ-որ մեկը կհասկանա ինձ. գոնե մեկը:

Դուք, հավանաբար, կհարցնեք, թե ինչ փոքր հույսի մասին է խոսքը, եթե ձեռագիրը շատերն են կարդալու. նման հարցերն ինձ անիմաստ են թվում, չնայած դրանք նույնպես նկատի եմ ունենում, որովհետև մարդիկ միշտ անօգուտ հարցեր են տալիս. հարցեր, որոնց նույնիսկ մակերեսային վերլուծությունը վեր է հանում դրանց անիմաստությունը: Բղավոցներով՝ հոգնելու աստիճան, կարող եմ որևէ համաժողովում ելույթ ունենալ հարյուր հազար ռուսների առջև. ոչ ոք ինձ չի հասկանա:

Բայց եղավ մեկը, որ հասկացավ ինձ. նա, որին ես սպանեցի:

Գլուխ 3

Բոլորը գիտեն, որ սպանել եմ Մարիա Իրիբարնե Հունթերին, բայց ոչ ոք չգիտի, թե մենք ինչպես ենք ծանոթացել, թե իրականում ինչպիսի հարաբերություններ են եղել մեր միջև, և թե ինչպես եմ հանգել նրան սպանելու գաղափարին: Կփորձեմ ամեն ինչ պատմել անկողմնակալ ձևով. չնայած՝ ես շատ եմ տառապել Մարիայի պատճառով, այնուամենայնիվ, ես զուրկ եմ սեփական անձը կատարյալ ներկայացնելու ձգտումից:

1946 թվականին «Գարնանային սրահ» ցուցահանդեսում ներկայացրի «Մայրություն» կոչվող մի նկար. ոճային առումով նման էր իմ նախկին նկարներին: «Ուժեղ է պատկերված. զիլ նկար է»,– ասում էին քննադատները՝ միայն

իրենց հատուկ անտանելի խոսելաձևով: Կարճ ասած՝ նկարն իր մեջ ներառում էր այն բոլոր հատկանիշները, որոնք այդ չաչանակները մշտապես փնտրում էին իմ կտավներում՝ ավելացնելով. «Խորքում ինտելեկտուալ ինչ-որ բան կա»:

Նկարի վերևի ձախ կողմում կարելի էր տեսնել հեռավոր և փոքրիկ մի տեսարան. ամայի լողափ և ծովին նայող մի կին. կինը, հավանաբար, սպասում էր աներևույթ և հենց նոր հեռացած մի ստվերի. ըստ իս՝ անհանգիստ և անվերջանալի մենության մի տեսարան էր:

Ոչ ոք ուշադրություն չդարձրեց նկարի այդ մասին. միայն թռուցիկ մի հայացք, ինչպես կնայեին արհեստական ինչ-որ բանի՝ բացառությամբ մի հոգու. միայն այդ անձանոթ աղջիկը հասկացավ, որ դրա մեջ էր թաքնված ամենակարևորը: Յուրահանդեսի բացման պաշտոնական արարողության օրն էր. անձանոթ մի աղջիկ երկար ժամանակ նայում էր նկարին՝ չնկատելով առաջամասում պատկերված և երեխայի խաղին հետևող մարմնեղ կնոջը, փոխարենը սևեռուն հայացքով նայում էր նկարի

վերևի ձախ մասին, և այդ ընթացքում նրան հետևելով՝ հասկացա, որ նա անջատվել էր ամբողջ աշխարհից. ոչ լսում և ոչ էլ տեսնում էր կտավի կողքով անցնող կամ կանգնող մարդկանց:

Ամբողջ ընթացքում կլանված նրան էի նայում և մինչ տատանվում էի աղջկան կանչելու անհաղթահարելի վախի ու անհագ ցանկության միջև, նա անհետացավ ամբոխի մեջ. վախենում էի, բայց ինչի՞ց, ես նման էի վախեցած այն մարդուն, ով իր ունեցած ամբողջ գումարը դրել էր մեկ խաղաքարի վրա: Այնուամենայնիվ, երբ աղջիկն անհետացավ, ես դյուրագրգիռ դարձա, ինձ դժբախտ զգացի՝ մտածելով, որ միգուցե այլևս երբեք նրան չեմ տեսնի, այն աղջկան, որ անհետացավ Բուենոս Այրեսի միլիոնավոր անանուն բնակիչների մեջ:

Այդ երեկո տուն վերադարձա նյարդային, դժգոհ և տխուր:

Մինչև ցուցահանդեսի փակումը ամեն օր գնում էի այնտեղ և բավական մոտ կանգնում նկարիս առջև, որպեսզի անցնող-գնացողների մեջ ճանաչեմ նրան, բայց նա այլևս չերևաց:

ԷՌՆԵՍՏՈ ՍԱԲԱՏՈ

Հաջորդ ամիսներին մտածում էի միայն նրա և մեր հանդիպման հնարավորության մասին: Սկսեցի նկարել նրա համար, թվում էր՝ նկարի ձախ անկյան տեսարանը գրավել էր իմ ամբողջ կտավը, իմ ստեղծագործությունը:

Գլուխ 4

Մի անգամ, վերջապես, նրան տեսա փողոցի մյուս մայթով անցնելիս. քայլում էր այնպիսի վճռականությամբ, կարծես թե ճիշտ պահին ճիշտ տեղում պիտի լիներ: Ես միանգամից ճանաչեցի նրան. նույնիսկ հսկայական ամբոխի մեջ նրան կճանաչեի: Աննկարագրելի հուզմունք ապրեցի: Այս ամիսների ընթացքում այնքան էի մտածել նրա մասին, այնքան բաներ պատկերացրել, որ հիմա նրան հանդիպելով՝ չգիտեի՝ ինչ անել:

Ճիշտն ասած՝ բազմիցս պատկերացրել էի մեր հանդիպումը, մանրամասն ծրագրել անելիքս: Կարծեմ արդեն ասել եմ, որ ես բնույթով ամաչկոտ եմ. դա էր պատճառը, որ ստիպված էի կշռադատել մտքումս ծրագրած

հանդիպման յուրաքանչյուր էլեմենտ. ամենադժվարը խոսակցություն սկսելն էր: Ես շատ տղամարդկանց եմ ճանաչում, որոնց համար դժվար չէ որևէ անձանոթ կնոջ հետ խոսակցություն սկսել, պետք է խոստովանեմ, որ այդ պահին ես նախանձեցի նրանց, չնայած երբեք կնամուղ չեմ եղել, այդ պահին ավստսանք զգացի, քանի որ ընդունակ չեմ կանանց հետ խոսակցության սկսելու, հատկապես այն հազվադեպ դեպքերում, երբ չես ուզում համակերպվել այն մտքի հետ, որ այդ կինն այլևս երբեք քո կյանքում չի լինի. ցավոք, ես ինքս էլ միշտ դուրս եմ մնացել կանանց կյանքից:

Անձանոթուհուն հանդիպելու հնարավոր բոլոր տարբերակները հավասարապես վերլուծության էին ենթարկվել իմ կողմից. այդպիսին է իմ բնույթը, անորոշ և անսպասելի իրադրություններում շփոթվում եմ և կորցնում մտածելու ունակությունս, այդ պատճառով ստիպված էի ինձ համար նախապատրաստել մի քանի եթե ոչ տրամաբանական, ապա գոնե հնարավոր տարբերակներ (երբ մոտ ընկերդ քեզ ուղարկում է վիրավորական խոսքերով լեցուն